

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Պաշտոնի անվանումը.	Ազգային փորձագետ
Ծրագրի անվանումը.	Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում
Ծրագրի տևողությունը.	2015 թվականի հունիս 1 – 25015 թվականի դեկտեմբերի 15
Սկիզբը.	2015 թվականի օգոստոսի 1
Պայմանագրի տեսակը.	Ծառայությունների մատուցման պայմանագիր
Վայրը	ՀՀ, ք. Երևան

Ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին

«Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում» ծրագիրն իրականացվում է Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի) ներկայացուցչության և ՀՀ արդարադատության նախարարության համագործակցության շրջանակում ՀՀ ԱՆ «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Այն ուղղված է օրենքի հետ առնչվող, այդ թվում՝ քրեական, քաղաքացիական կամ վարչական արդարադատության համակարգերի և մարմինների շրջանակում որպես տուժող, զոհ, օրենքի հետ խնդիր ունեցող երեխաների իրավունքների պաշտպանության իրավական և գործնական ընթացակարգերի զարգացման խթանմանը և բարելավմանը, արդարադատության մատչելիության ապահովմանը:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու է օրենսդրության վերանայում երեխաների իրավունքների պաշտպանության դիտանկյունից, անչափահասների արդարադատության վերաբերյալ տեղեկատվության հավաքման առկա վիճակի գնահատում և միասնական, համապարփակ տեղեկատվական շտեմարանի ստեղծմանն ուղղված գործողությունների պլանի կազմում, կարողությունների զարգացում օրենքի հետ խնդիրներ ունեցող, վկա և տուժող երեխաների հետ աշխատանքում քննչական անձնակազմի համար:

Հաշվի առնելով տարբեր գերատեսչությունների դերակատարության և համագործակցության կարևորությունը անչափահասների արդարադատության համակարգի կայացման գործում՝ ծրագրի շրջանակներում նախատեսվում է համակարգող խորհրդի ստեղծում:

Աշխատանքի շրջանակը

Ծրագրի աշխատակազմի, միջազգային փորձագետի հետ համատեղ ծրագրի շրջանակում ապահովել ծրագրի հետևյալ բաղադրիչի կատարումը. երեխաների իրավունքների պաշտպանության և արդադատության մատչելիության տեսանկյունից օրենսդրության վերլուծություն և բարելավում:

Պարտականությունները

Փորձագետն իրականացնելու է հետևյալ աշխատանքները.

- Ուսումնասիրել և տարանջատել քրեական արդարադատության օրենսդրության շրջանակում երեխաներին և նրանց իրավունքներին առնչվող իրավական կարգավորումները և շրջանառության մեջ առկա նախագծերը,
- Միջազգային փորձագետի խորհրդատվությամբ իրականացնել համապատասխան օրենսդրական կարգավորումների վերլուծություն՝ ըստ երեխաների իրավունքների պաշտպանության ՄԱԿ-ի չափանիշների համադրության,
- Ապահովել ՀՀ օրենսդրության համապատասխան իրավական կարգավորումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը միջազգային փորձագետին,
- Միջազգային փորձագետի հետ համատեղ վերոնշյալ իրավական կարգավորումների վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ և իրավական դրույթների նախագծեր առկա օրենսդրական ակտերի և նախագծերի բարելավման ուղղությամբ,
- Մասնակցել ծրագրի աշխատակազմի հանդիպումներին, միջոցառումներին, աշխատանքային հանդիպումներին և քննարկումներին,
- Տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն և աջակցություն միջազգային փորձագետին, ապահովել վերջինիս կողմից տրամադրված խորհրդատվության և տեղեկատվության կիրառումն իրականացվող աշխատանքներում,
- Պատրաստել և ներկայացնել աշխատանքային պլան, ժամանակացույց, ընթացիկ հաշվետվություններ և այլ պահանջվող փաստաթղթեր:

Արդյունքը

Օրենքի հետ խնդիր ունեցող, հանցագործության վկա, զոհ, տուժած երեխաների իրավունքների պաշտպանության և արդադատության մատչելիության տեսանկյունից օրենսդրության վերլուծություն և բարելավմանն ուղղված առաջարկների ներկայացում:

Պահանջվող որակավորում, փորձ և կարողություններ

Կրթություն

Բարձրագույն իրավաբանական կրթություն

Աշխատանքային փորձ

Նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձ, մասնավորապես՝ երեխաների իրավունքների պաշտպանության և անչափահասների արդարադատության ոլորտում: Նշված ոլորտում իրավական վերլուծություններ իրականացնելու փորձը կդիտվի որպես առավելություն:

Կարողություններ

- Իրավական վերլուծություններ իրականացնելու հմտություն
- Թիմի հետ աշխատելու կարողություն
- Ժամանակ հատկացնելու պատրաստակամություն
- Գերազանց վերլուծական և հաշվետվություններ գրելու, ներկայացնելու և հմտություններ,
- Հայերենի և անգլերենի գերազանց իմացություն
- Համակարգչային գիտելիքներ. (MS Word Excel, PowerPoint; web applications)